ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԱՆ «ԱՐՄԱՎԻՐ» ԵՎ «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԾՁԲ-20/1

ք.Երևան

«18» դեկտեմբերի 2019թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, ով գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Ռեդի-Սթեդի» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրենի ժ/պ Աշոտ Միրզախանյանի, ով գործում է 10.12.2019 թվականի թիվ 11-Գ հրամանի հիման վրա, (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ ԱՆ «Արմավիր» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկների կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարել պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնել ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարել պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 658,672,500 (վեց հարյուր հիսունութ միլիոն վեց հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ 162,000,000 (մեկ հարյուր վաթսուներկու միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են __18__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի

առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.15 Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների ծագման պայման է հանդիսանում Կատարողի կողմից կանխավճարի չափով բանկային երաշխիքի տրամադրումը, որը Կատարողը պետք է ներկայացնի մինչև 24.12.2019թ.-ը ներառյալ, իսկ Պատվիրատուի կողմից կանխավճարի փոխանցումը Կատարողի բանկային հաշվին պետք է կատարվի բանկային երաշխիքի հիման վրա՝ մինչև 30.12.2019թ.-ը ներառյալ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	ՀՀ, ք. Երևան, Բուռնազյան 7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011175016	Հ/հ՝ 220533332767000
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ՝ 00851011
ՔԿ ծառայության՝ Ա.Ղազարյան	Տնօրենի ժ/պ՝ Աշոտ Միրզախանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«18» դեկտեմբերի 2019 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԾՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության								
Չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	Ժամկետը**
1	55321100/505	Սննդի պատրաստման ծառայություններ, «Արմավիր» ՔԿՀ	Քրեակատարողական համակարգի բարեփոխումների և զարգացման ներկա պահանջներից ելնելով, ինչպես նաև համակարգի բնականոն աշխատանքը կազմակերպելու նպատակով՝ քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ է, ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների համար ձեռքբերել պատրաստի սննդի մատուցման ծառայություններ (ներառյալ հացը), որը իրենից ներկայացնում է սննդամթերքի ձեռքբերման, սննդի պատրաստման և հատկացման արդյունավետ համակարգ, ինչն իրականացվելու է հետևյալ փուլերով՝ • ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի տարածքում, որը կտրամադրվի Պատվիրատուի կողմից, անհրաժեշտ սննդամթերքի պահեստավորում՝ Կատարողի կողմից բերված անհրաժեշտ սարքավորումների միջոցով (քրեակատարողական հիմնարկի կողմից կարող են տրամադրվել որոշակի սարքավորումներ, սակայն դրանց սպասարկման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն Կատարողի կողմից), • ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի խոհանոցում թարմ և որակյալ սննդի պատրաստում՝ մասնագիտացված խոհարարների կողմից, Կատարողի կողմից բերված անհրաժեշտ սպասքի և սարքավորումների միջոցով (քրեակատարողական հիմնարկի կողմից կարող են տրամադրվել որոշակի սպասք և սարքավորումներ, սակայն դրանց սպասարկման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն Կատարողի կողմից),	ՀՀ դրամ	436821000	1	ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ – Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Չոբանքարա	26.12.2019թ.-ից մինչև 25.12.2020թ.՝ 366 օր տևողությամբ:

			• ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին որակյալ սննդի տրամադրում (ներառյալ հացը), համաձայն նախորոք հաստատված ճաշացուցակի՝ մեկ կամ երկու շաբաթվա համար, որը տարբեր շաբաթների համար փոփոխվում է՝ բազմազանությունը ապահովելու նպատակով (ճաշացուցակի մեկ շաբաթվա օրինակելի ձևը տես հավելված 1-ում): Ճաշացուցակները կազմվում են Կատարողի կողմից, իսկ հաստատվում «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի պետի կողմից: Նշված ճանապարհով պատրաստված սնունդը պետք է լինի բազմազան, որակյալ և սննդի միջին օրական էներգետիկ արժեքը պետք է ապահովի նվազագույնը՝ 2800 կիլոկալորիա: Ճաշացուցակները կազմելիս պետք է առաջնորդվել 2015թ.-ի հոկտեմբերի 15-ի ՀՀ կառավարության N 1182-Ն և 2003թ.-ի հուլիսի 31-ի ՀՀ կառավարության N961-Ն որոշումների պահանջներով, ապահովվելով սննդամթերքի չափաբաժինները (չափաբաժիններից ոչ պակաս): ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների օրական միջին թիվը ծառայությունների մատուցման ընթացքում նախատեսվում է մոտավորապես **770 մարդ:** Սննդի պատրաստման ծառայությունները պետք է իրականացվեն **366 օր տևողությամբ՝** 26.12.2019թ.-ից մինչև 25.12.2020թ. ներառյալ: **Պատրաստի սննդի մատուցման ծառայություններն իրականացնելիս Կատարողը պետք է իրականացնի հետևյալ լրացուցիչ ծառայությունները.** ա. Անհրաժեշտ սառանարանների և վառարանների տրամադրում և մոնտաժում՝ ՔԿ հիմնարկում, իսկ ծառայության ավարտից ապամոնտաժում և հետ վերադարձ: բ. Ծառայությունների մատուցման ժամանակ անհրաժեշտ տեխնիկական միջոցների խափանումների դեպքում, դրանց վերանորոգման և սպասարկման ծառայություններ, ինչպես նաև ծառայությունների մատուցման ժամանակ անհրաժեշտ մեկանգամյա տարաների տրամադրում: գ. Կատարողի օգտագործման տակ գտնվող պահեստների և խոհանոցների տարածքների բարվոք վիճակի պահպանում, իսկ անհրաժեշտության դեպքում դրանց ընթացիկ նորոգում և այդ աշխատանքների իրականացման ժամանակահատվածում սննդի հատկացման գործընթացի անխափանության ապահովում. դ. Կատարողի օգտագործման տակ գտնվող պահեստների և					

			խոհանոցների տարածքների սանիտարահիգենիկ միջոցառումների կազմակերպում և մշտապես մաքրության ապահովում: **Մեկ անձի համար պատրաստի սննդի վրա ծախսված օրվա գումարը որոշելու համար պետք է Մասնակցի գնային առաջարկը բաժանել 366 օրվա վրա և ստացված գումարը բաժանել 770 անձի վրա (գնային առաջարկ:366:770=մեկ անձի գումար՝ մեկ օրվա համար), նշված գումարով Կատարողը կատարելու է մեկ անձի օրվա սննդի տրամադրումը (մեկ անձի համար պատրաստի սննդի վրա ծախսված օրվա գումարը կազմում է 1550 ՀՀ դրամ):** ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների միջին թվաքանակի մինչև 10 %-ի չափով նախատեսել, որ հիվանդություններով տառապող անձանց առողջության պահպանման իրավունքի իրացման նպատակով, բժիշկի տված եզրակացության հիման վրա, պետք է ապահովել դիետիկ կամ հավելյալ սննդի պատրաստում և տրամադրում, առանց լրացուցիչ գումար նախատեսելու: ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկից կալանավորված անձիք (օրական միջինը մինչև 20 մարդ) չորս և ավելի ժամ տևողությամբ տեղափոխում են դատական նիստերի, ուստի նշված անձանց համար ճաշի փոխարեն տրամադրվում է չոր սնունդ՝ միանգամյա օգտագործման տարաներով, առանց լրացուցիչ գումար նախատեսելու (միանգամյա օգտագործման տարաները կարող են տրամադրվել ՔԿՀ-ի կողմից): **Սննդի պատրաստման ծառայություններն իրականացնելիս Կատարողը պետք է պահպանի սննդի անվտանգության հետ կապված բոլոր գործառույթները:** **ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի սնվողների, հիվանդների և դատական նիստերի մեկնողների քանակները Կատարողին է տրամադրվում, ՔԿ հիմնարկի վարչակազմի կողմից, սննդի պատրաստման նախորդ օրվա ընթացքում՝ մինչև 17:00-ն:**					
2	55321100/506	Սննդի պատրաստման ծառայություններ, «Նուբարաշեն» ՔԿՀ	Քրեակատարողական համակարգի բարեփոխումների և զարգացման ներկա պահանջներից ելնելով, ինչպես նաև համակարգի բնականոն աշխատանքը կազմակերպելու նպատակով՝ քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ է, ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների համար ձեռքբերել պատրաստի սննդի մատուցման ծառայություններ (ներառյալ հացը), որը իրենից ներկայացնում է սննդամթերքի ձեռքբերման, սննդի պատրաստման և հատկացման արդյունավետ համակարգ, ինչն	ՀՀ դրամ	221851500	1	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ – ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 2	25.12.2019թ.-ից մինչև 25.12.2020թ.՝ 367 օր տևողությամբ:

			իրականացվելու է հետևյալ փուլերով՝ • ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի տարածքում, որը կտրամադրվի Պատվիրատուի կողմից, անհրաժեշտ սննդամթերքի պահեստավորում՝ Կատարողի կողմից բերված անհրաժեշտ սարքավորումների միջոցով (քրեակատարողական հիմնարկի կողմից կարող են տրամադրվել որոշակի սարքավորումներ, սակայն դրանց սպասարկման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն Կատարողի կողմից), • ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի խոհանոցում թարմ և որակյալ սննդի պատրաստում՝ մասնագիտացված խոհարարների կողմից, Կատարողի կողմից բերված անհրաժեշտ սպասքի և սարքավորումների միջոցով (քրեակատարողական հիմնարկի կողմից կարող են տրամադրվել որոշակի սպասք և սարքավորումներ, սակայն դրանց սպասարկման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն Կատարողի կողմից), • ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին որակյալ սննդի տրամադրում (ներառյալ հացը), համաձայն նախորոք հաստատված ճաշացուցակի՝ մեկ կամ երկու շաբաթվա համար, որը տարբեր շաբաթների համար փոփոխվում է՝ բազմազանությունը ապահովելու նպատակով (ճաշացուցակի մեկ շաբաթվա օրինակելի ձևը տես հավելված 1-ում): Ճաշացուցակները կազմվում են Կատարողի կողմից, իսկ հաստատվում «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի կողմից: Նշված ճանապարհով պատրաստված սնունդը պետք է լինի բազմազան, որակյալ և սննդի միջին օրական էներգետիկ արժեքը պետք է ապահովի նվազագույնը՝ 2800 կիլոկալորիա: Ճաշացուցակները կազմելիս պետք է առաջնորդվել 2015թ.-ի հոկտեմբերի 15-ի ՀՀ կառավարության N 1182-Ն և 2003թ.-ի հուլիսի 31-ի ՀՀ կառավարության N961-Ն որոշումների պահանջներով, ապահովվելով սննդամթերքի չափաբաժինները (չափաբաժիններից ոչ պակաս): ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների օրական միջին թիվը ծառայությունների մատուցման ընթացքում նախատեսվում է մոտավորապես **390 մարդ:** Սննդի պատրաստման ծառայությունները պետք է իրականացվեն **367 օր տևողությամբ**՝ 25.12.2019թ.-ից մինչև 25.12.2020թ. ներառյալ: **Պատրաստի սննդի մատուցման ծառայություններն իրականացնելիս Կատարողը պետք է իրականացնի հետևյալ լրացուցիչ**					

			ծառայությունները. ա. Անհրաժեշտ սառանարանների և վառարանների տրամադրում և մոնտաժում՝ ՔԿ հիմնարկում, իսկ ծառայության ավարտից ապամոնտաժում և հետ վերադարձ: բ. Ծառայությունների մատուցման ժամանակ անհրաժեշտ տեխնիկական միջոցների խափանումների դեպքում, դրանց վերանորոգման և սպասարկման ծառայություններ, ինչպես նաև ծառայությունների մատուցման ժամանակ անհրաժեշտ մեկանգամյա տարաների տրամադրում: գ. Կատարողի օգտագործման տակ գտնվող պահեստների և խոհանոցների տարածքների բարվոք վիճակի պահպանում, իսկ անհրաժեշտության դեպքում դրանց ընթացիկ նորոգում և այդ աշխատանքների իրականացման ժամանակահատվածում սննդի հատկացման գործընթացի անխափանության ապահովում. դ. Կատարողի օգտագործման տակ գտնվող պահեստների և խոհանոցների տարածքների սանիտարահիգենիկ միջոցառումների կազմակերպում և մշտապես մաքրության ապահովում: **Մեկ անձի համար պատրաստի սննդի վրա ծախսված օրվա գումարը որոշելու համար պետք է Մասնակցի գնային առաջարկը բաժանել 367 օրվա վրա և ստացված գումարը բաժանել 390 անձի վրա (գնային առաջարկ:367:390=մեկ անձի գումար՝ մեկ օրվա համար), նշված գումարով Կատարողը կատարելու է մեկ անձի օրվա սննդի տրամադրումը (մեկ անձի համար պատրաստի սննդի վրա ծախսված օրվա գումարը կազմում է 1550 ՀՀ դրամ):** ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների միջին թվաքանակի մինչև 10 %-ի չափով նախատեսել, որ հիվանդություններով տառապող անձանց առողջության պահպանման իրավունքի իրացման նպատակով, բժիշկի տված եզրակացության հիման վրա, պետք է ապահովել դիետիկ կամ հավելյալ սննդի պատրաստում և տրամադրում, առանց լրացուցիչ գումար նախատեսելու: ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից կալանավորված անձիք (օրական միջինը մինչև 10 մարդ) չորս և ավելի ժամ տևողությամբ տեղափոխում են դատական նիստերի, ուստի նշված անձանց համար ճաշի փոխարեն տրամադրվում է չոր սնունդ՝ միանգամյա օգտագործման տարաներով, առանց լրացուցիչ գումար նախատեսելու (միանգամյա օգտագործման տարաները կարող են տրամադրվել ՔԿՀ-ի կողմից): **Սննդի պատրաստման ծառայություններն իրականացնելիս**					

			Կատարողը պետք է պահպանի սննդի անվտանգության հետ կապված բոլոր գործառույթները: ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի սնվողների, հիվանդների և դատական նիստերի մեկնողների քանակները Կատարողին է տրամադրվում, ՔԿ հիմնարկի վարչակազմի կողմից, սննդի պատրաստման նախորդ օրվա ընթացքում՝ մինչև 17:00-ն:					

Հավելված 1

Ճաշացուցակի մեկ շաբաթվա օրինակելի ձև

Երկուշաբթի		
Նախաճաշ	Չափաբաժին /գրամ/	Կալորիա /Կկալ./
վարսակի շիլա	200	204
կաթնաշոռ	30	40,3
թթվասեր	20	23,8
թեյ,շաքարավազով	200	85,3
հաց	150	382,5
Ճաշ		
բրնձով ապուր	300	168
կարտոֆիլ ջեռոցի	150	288,6
վերմիշել	150	167,5
հավի կոտլետ	90	136,8
կաղամբով աղցան	120	52,8
հաց	200	510
կոմպոտ թարմ մրգերից	200	120,7
Ընթրիք		
բրինձ գազար,սամիթով	200	236,2
մարոլով աղցան	100	42,5
կոմպոտ թարմ մրգերից	200	120,7
պանիր	30	80,7
հաց	150	382,5
Ընդամենը օր	**2490**	**3042,9**

Երեքշաբթի		
Նախաճաշ	Չափաբաժին /գրամ/	Կալորիա /Կկալ./
ձվածեղ	150	182,5
խտ. կաթ	30	106,6
բիսկվիտ	50	123,5
թեյ ,շաքարավազով	200	85,5
հաց	150	382,5
Ճաշ		
ոսպով ապուր	250	140
տապակած կաղամբ վրացական սոուսով	150	212,3
բրինձ	150	189,3
հավի նագետս	70	200,9
կաղամբով նեխուրով աղցան	120	58,1
հաց	200	510
կոմպոտ թարմ մրգերից	200	120,7
Ընթրիք		
մակարոն	150	167,76
կորեական աղցան	100	137,2
կոմպոտ թարմ մրգերից	200	120,7
պանիր	30	80,7
հաց	150	382,5
Ընդամենը օր	**2350**	**3200,76**

Չորեքշաբթի		
Նախաճաշ	Չափաբաժին /գրամ/	Կալորիա /Կկալ./
հնդկաձավար	150	197,5
կարագ	25	184,5
պանրով կարկանդակ	50	170
թեյ ,շաքարավազով	200	85,5
հաց	150	382,5
Ճաշ		
սպաս	250	261,3
բանջարեղենային ժարկո	150	151,8
սպագետի	150	168
տավարի մսով բոլոնյեզ	100	178,8
բազուկով աղցան	100	80,2
հաց	200	510
կոմպոտ թարմ մրգերից	200	120,7
Ընթրիք		
հաճար բանջարեղենով	100	119,5
բանջարեղենային կոտլետ	100	128,3
կոմպոտ թարմ մրգերից	200	120,7
պանիր	30	80,7
հաց	150	382,5
Ընդամենը օր	**2305**	**3322,5**

Հինգշաբթի		
Նախաճաշ	Չափաբաժին /գրամ/	Կալորիա /Կկալ./
մյուսլի վարսակով	200	294,5
սեզոնային միրգ	100	50
կարտոֆիլով կարկանդակ	60	98,4
թեյ ,շաքարավազով	200	85,5
հաց	150	382,5
Ճաշ		
դեղին ոլոռով ապուր	250	152,5
կարտոֆիլի խյուս	150	184,8
ծաղկակաղամբ ձվով	150	74,2
ձկան կոտլետ	90	104,2
գազարով թթվասերով աղցան	100	43,1
հաց	200	510
կոմպոտ թարմ մրգերից	200	120,7
Ընթրիք		
բրնձով գազարով փլավ	150	177,2
կաղամբով աղցան	100	52,8
կոմպոտ թարմ մրգերից	200	120,7
պանիր	30	80,7
հաց	150	382,5
Ընդամենը օր	**2730**	**3164,3**

ՈՒրբաթ		
Նախաճաշ	Չափաբաժին /գրամ/	Կալորիա /Կկալ./
սպիտակաձավարի շիլա	200	378
խաչապուրի	60	235
կեքս մրգային	50	78,5

թեյ ,շաքարավազով		
հաց	200	85,5
	150	382,5
Ճաշ		
բորշչ		
ոսպով սոուս	250	84,7
մակարոն	70	78,3
հավի լանգետ	150	168
հազարով գազարավ աղցան	90	167
հաց	100	42,5
կոմպոտ թարմ մրգերից	200	510
Ընթրիք	200	120,7
ջեռոցի կարտոֆիլ		
կաղամբով վարունգով աղցան	200	307,8
թեյ	100	52,8
պանիր	150	120,7
հաց	30	80,7
Ընդամենը օր	150	382,5
	2350	3275,2
Շաբաթ		
Նախաճաշ	Չափաբաժին /գրամ/	Կալորիա /Կկալ./
հնդկաձավար	200	263,5
թթվասեր	20	23,8
կաթնաշոռ	30	40,3
թեյ, շաքարավազով	200	85,5
հաց	150	382,5
Ճաշ		
բանջարեղենային ապուր		
կարտոֆիլ գյուղական ձևով պատրաստված	250	89
բրինձ	200	246
հավի մսով սոուսային ճաշ	150	177,1
մառոլով և եգիպտացորենով աղցան	100	203
հաց	120	53,8
կոմպոտ թարմ մրգերից	200	510
Ընթրիք	200	120,7
բրինձ գազար,սամիթով		
մարոլով աղցան	200	236,2
կոմպոտ թարմ մրգերից	100	48,6
պանիր	200	120,7
հաց	30	80,7
Ընդամենը օր	150	382,5
	2500	3063,9
Կիրակի		
Նախաճաշ	Չափաբաժին /գրամ/	Կալորիա /Կկալ./
պոմիդորով ձվածեղ	150	198,4
խտ. կաթ	30	106,6
բիսկվիտ	50	123,5
թեյ, շաքարավազով	200	85,5
հաց	150	382,5
Ճաշ		
դդումով ապուր		
տապակած կաղամբ վրացական սոուսով	250	93
բրինձ	150	193,5
	150	177,1

հավի նագետս	70	201
5 բանջարեղենով աղցան	120	68,2
հաց	200	510
կոմպոտ թարմ մրգերից	200	120,7
Ընթրիք		
մակարոն	200	223,5
օլիվյե աղցան	100	198
կոմպոտ թարմ մրգերից	200	120,7
պանիր	30	80,7
հաց	150	382,5
Ընդամենը օր	**2400**	**3265,4**

Մեկ անձի յոթ օրվա միջին օրվա կալորիականությունը- 3191 Կկալ.:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության՝
Ա.Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բուռնազյան 7
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 220533332767000
ՀՎՀՀ՝ 00851011
Տնօրենի ժ/պ՝ Աշոտ Միրզախանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«18» դեկտեմբերի 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԾՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	կանխավճարի վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	55321100/505	Սննդի պատրաստման ծառայություններ, «Արմավիր» ՔԿՀ	107450000	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն												
2	55321100/506	Սննդի պատրաստման ծառայություններ, «Նուբարաշեն» ՔԿՀ	54550000	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն												
		ընդամենը	162000000													

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության՝
Ա.Ղազարյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բուռնազյան 7
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 220533332767000
ՀՎՀՀ՝ 00851011
Տնօրենի ժ/պ՝ Աշոտ Միրզպիանյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«18» դեկտեմբերի 2019 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԾՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N 3.1
«18» դեկտեմբերի 2019 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԾՀԲ-20/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝	
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
_____	_____
ստորագրություն	ստորագրություն